

1.2 Արտադրություն (ծառայություններ)


1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2004թ. հունվարին հանրապետությունում, ըստ արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առածգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 33342.4 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 30549.4 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 1185.1 մլն. դրամի, այլ երկրներում՝ 6022.7 մլն. դրամի արտադրանք:

2003թ. հունվարի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 91.1%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 90.9%:

2004թ. հունվարին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսի նվազումը 8.9 տոկոսային կետով, պայմանավորված է արդյունաբերության որոշ գործունեության ոլորտներում, արտադրության ծավալների կրճատմամբ, հատկապես ադամանդագործության մեջ (2003թ. հունվարի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 67.7%): Եթե նշված ոլորտում պահպանվեր 2003թ. հունվարի արտադրության մակարդակը, ապա ամբողջ արդյունաբերության ֆիզիկական ծավալի ինդեքսը կկազմեր 100.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2002թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2003 թ.			
հունվար	78.9	109.9	78.9
փետրվար	99.1	105.7	78.2
մարտ	105.5	115.5	82.5
ապրիլ	94.9	126.2	78.3
մայիս	96.4	136.0	75.5
հունիս	117.6	119.7	88.8
հուլիս	97.9	110.5	86.9
օգոստոս	103.4	127.7	89.9
սեպտեմբեր	107.2	129.4	96.4
հոկտեմբեր	102.8	108.5	99.1
նոյեմբեր	84.5	109.0	83.7
դեկտեմբեր	109.2	91.3	91.4
2004 թ.			
հունվար	81.6	91.1	81.6

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ըստ տնտեսական գործունեության տեսակների¹

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	2004թ. հունվարի արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2003թ. հունվարի նկատմամբ, համադրելի գներով), %
Ամբողջ արդյունաբերությունը	33342.4	30549.4	91.1
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	10539.6	10539.6	91.7
<i>դրանից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	10117.2	10117.2	92.5
<i>որից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	9014.8	9014.8	93.1
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	1102.4	1102.4	87.8
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	422.4	422.4	75.1
հանքագործական արդյունաբերություն	5000.2	3789.9	94.3
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	4903.0	3697.6	94.2
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	97.2	92.3	97.5
մշակող արդյունաբերություն	17802.6	16219.9	90.3
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	9880.0	9479.3	97.2
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	565.7	887.3	137.0


¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ



	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն դրամ	2004թ. հունվարի արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2003թ. հունվարի նկատմամբ (համադրելի գներով), %
մանածագործական արտադրություն	136.7	138.7	3.9 անգամ
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	89.5	94.0	106.9
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	6.8	5.0	74.7
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	61.9	68.0	93.0
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	368.8	339.9	117.0
քիմիական արդյունաբերություն	1367.2	595.7	8.5 անգամ
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	98.0	63.1	171.9
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	311.0	442.1	2.1 անգամ
մետաղագործական արդյունաբերություն	2552.8	2346.4	85.6
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	150.1	151.8	64.6
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	223.7	193.6	142.2
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	1147.2	761.2	69.3
գործունեության այլ տեսակներ	843.2	653.8	137.0

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2004թ. հունվարին





- Մշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- Հանքագործական արդյունաբերություն


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2004թ. հունվարին արտադրված (հաշվառվող) 98 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 54 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2003թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 51-ից 27-ի և սպառողական ապրանքների՝ 47-ից 27-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալներ¹

(մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվարին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2004թ.	2003թ. ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	11992.5	11382.5	105.4
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	7583.3	7256.8	104.5
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	1773.0	2222.7	79.8
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	2636.2	1903.0	138.5
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	902.6	640.4	140.9
մշակութային և տնտեսական նշանակության	1733.6	1262.6	137.3

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվարին հանրապետությունում թողարկվել է 603.4 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2003թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 102.3%-ը: Ընդ որում, ՅԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 4.9 անգամ, ՅԷԿ-երում՝ 6.4% -ով, իսկ ՋԷԿ-երում նվազել է 56.2% -ով:

2004թ. հունվարին ՅԱԷԿ-ը թողարկել է 278.6 մլն.կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 46.2% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 169.4 մլն. կվտ ժամ և 28.1%-ը, ՅԷԿ-երը՝ 155.4 մլն. կվտ ժամ և 25.7%-ը: 2004թ. հունվարին հանրապետությունում թողարկվել է 96.6 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2003թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 100.0%:

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները⁴

	2004 թ. հունվար	2003 թ. հունվար	2004թ. հունվարը 2003 թ. հունվարի նկատմամբ, %
Միս ⁵ , տոննա	3143	3178	98.9
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , տոննա	6990	6418	108.9
Պանիր ⁵ , տոննա	254.8	257.6	98.9
Սառնաթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	53.3	45.0	118.4
Պաղպաղակ, տոննա	1.0	9.6	10.4
Պահածո, տոննա	50.3	43.8	114.8
Ալյուր, տոննա	10612	9724	109.1
Ձավարեղեն, տոննա	-	3.0	-
Հաց և հացամթերք, հազ. տոննա	24.3	24.3	100.0
Հրուշակեղեն, տոննա	187.9	321.3	58.5
Սակարոնեղեն, տոննա	100.6	68.3	147.3

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2003թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2004թ. գներով:

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

⁴ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ժամկագիր՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2004 թ. հունվար	2003 թ. հունվար	2004թ. հունվարը 2003 թ. հունվարի նկատմամբ, %
Բուսական յուղ, տոննա	-	29.0	-
Օդի և օդու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	776.5	626.0	124.0
Կոնյակ, հազ. լիտր	328.4	463.6	70.8
Խաղողի գինի, հազ. լիտր	391.2	141.1	2.8 անգամ
Շամայան գինի, հազ. լիտր	27.6	35.3	78.2
Փարեջուր, հազ. լիտր	52.6	259.9	20.2
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	1642.1	1898.4	86.5
Բնական հյութեր, հազ. լիտր	303.8	203.1	149.6
Հանքային ջրեր, հազ. լիտր	1160.7	1388.9	83.6
Աղ, տոննա	2567.6	2763.5	92.9
Սիգարետներ, մլն. հատ	58.6	50.6	115.8
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	57.8	156.0	37.1

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2004 թ. հունվար	2003 թ. հունվար	2004թ. հունվարը 2003 թ. հունվարի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	6.0	0.6	10 անգամ
Գորգեր և գորգեղեն, մ ²	1014.2	743.2	136.5
Գուլպեղեն, հազ. գուլգ	12.0	40.5	29.6
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	222.0	129.8	171.0
Կարի արտադրանք ¹ , մլն. դրամ	585.4	568.9	102.9

2004թ. հունվարին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2003թ. հունվարի համեմատ ավելացել է 4.2 անգամ, քիմիկադեղագործական արտադրանքինը՝ 35.0%-ով, իսկ պլաստմասսայից իրերի և վճացող և մաքրող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 54.1 և 72.5%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2004թ. հունվար	2003թ. հունվար	2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	162	97	167.0
Ապրանքային բետոն, մ ³	2721	1346	2 անգամ
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	1382	1777	77.8
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	3830	638	6 անգամ
Կիր, տոննա	40.0	-	-
Ցեմենտ, հազ. տոննա	1.5	1.9	78.9
Գաջ, տոննա	841	530	158.7
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ ³	40	91	44.0
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	280	50	5.6 անգամ
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	2461.8	778.4	3.2 անգամ

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե գլանվածքի արտադրությունն ավելացել է 11 անգամ, ցինկի խտանյութինը՝ 24.5%-ով, իսկ պղնձե խտանյութում պղնձի արտադրությունը նվազել է 22.6%-ով:

¹ Ներառյալ պատվիրատուի հունքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությանը զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2004 թ. հունվար	2003 թ. հունվար	2004թ. հունվարը 2003 թ. հունվարի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	5	1	5 անգամ
Ռելեներ, հատ	350	2360	14.8
Ուժային ճկուն կաբելներ, կմ	-	0.2	-
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	399.3	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	680	80	8.5 անգամ
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	20	18	111.1
Համակարգիչներ, հատ	93	173	53.8
Ջրային հաշվիչներ, հատ	-	2407	-
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	6	6	100.0
Պոմպեր, հատ	-	250	-